ՀՈՎՀԱՆՆԵՍ ԾԻՐԱՋ

ԵԿԵՂԵՑԻՆ ԻՄ ՀԱՅՈՑ...

Եկեղեցին հայկական
Բարձր բերդն է հավատքի...
Վահան Թեքեյան

Եկեղեցին իմ հայոց՝ առաջնեկն է Հիսուսի.—
Արարատյան դաշտն իրեն՝ Աստվածընծա մայր բուրվառ.
Նա բուրվառի մեջ վառվող ոսկե խունկն է մեր հույսի,
Որ վառվում է իր ազգի սրտի նման անապառ.—
Դարն ինչքան էլ պղծանա՝ վանքը նման է կույսի՝
Վեր մագնիսված՝ կքաշե որդիներին իր թափառ...
Ինչպես ոգին մարմնի մեջ՝ եկեղեցին է երկրում,
Եկեղեցին իմ հայոց՝ նման ոսկի սանդուխքի,
Որով երկինք են հույսի աղոթքները բարձրանում,
Բուրվառումով հայ ոգու և բուրմունքով հայ խունկի,
Բայց մեղքերի մութն՝ ավա՜ղ, ինչքան շատ է թանձրանում՝
Այնքան իր զույգ սրտով էլ հույսը գալիս է ծունկի:
Եկեղեցին իմ հայոց՝ արծիվ երկու գլխանի,
Մեկն այստեղ է մասիսված, մեկը դրսի մթարում,
Երազելով մեկտեղվել՝ աղոթում են, որ ծնի
Մսուրն ուրիշ մի Հիսուս, որ հայակապ այս դարում
Իր զույգ գլխից ոչ մեկը մյուսի աչքը չհանի,—
Ով չի հանում՝ նա ազգին Աստծո համբույրն է բերում...
Եկեղեցին իմ խոնարհ՝ մեր հին թագի քույն է վեհ,
Հայոց գահն է եղել հար՝ հայ գահընկեց դարերում,
Թրի դեմ էլ խաչ բռնած՝ չի ընկրկել երբևէ,
Վառ է պահել հայ ոգին, ինչպես կայծը քարերում,

Աղոթելով, որ իցի՜վ, չարը ծով մեղքն՝ իր քավե,
Որ հայ աստվածն հայտնվի հայոց բոլոր սարերում...
Եկեղեցին իմ արդար՝ խղճի բուրվառ մորս պես
Ստինքների զանգերով կաթ է լռած մեր հույսի,
Կույս մոմերի լույս կաթով դեռ սնում է, ազգ իմ, քեզ,
Գրկած խիղճը, որպես կույս Աստվածամայրն՝ Հիսուսին,
Ազգ իմ, ինձ հետ կաղոթե, որ ցրվածդ բոունցքես,
Հանված աչքդ՝ Զվարթնոցդ անգամ հառես Մասիսին:
Եկեղեցին իմ հայոց՝ Մասիսն ինքն է գմբեթված,
Միակ սանդուխքն հավատքի՝ կաթողիկված դեպի վեր,
Լռությամբ էլ կաղոթե իր ձյունով էլ կանթեղված,
Լուսավորչի աստղադեմ կանթեղից էլ բարձր ու վեհ,
Զյան լռության մեջ էլ հայ մոնչյունն է անթեղված,
Քանզի թվում է, թե մեզ Աստված ինքն էլ կդավե...
Եկեղեցին իմ ամրոց, ազգ իմ, վշտիդ քառուսմ,
Երբ չի կարող վար բերել քար Աստծուն բարձունքից՝
Քո դարերի շշուկով քո արտի հետ է խոսում՝
Հույսիդ կանթեղն է վառում Աստվածամոր արցունքից,
Եվ թվում է, թե վերից քո վիշտն Աստված է կիսում՝
Արթնանալով բուրվառվող քո հավատքի հարցմունքից...
Եկեղեցին իմ անկեղծ, այսպես դարեր ոտընկա՝
Մեղքի ընդդեմ կսպասե վերադարձին Հիսուսի,
Կարոտելով Մասիսին հավատում է, որ կգա
Կգա ահեղ դատաստանն՝ աղոթքով էլ իր հույսի,
Ինչքան էլ խուլ ողողանջեն հույսի զանգերն իմ ոսկյա,
Վաղ-ուշ պիտի փշրվեն շղթաներն էլ Մասիսի...
Եկեղեցիս հայամեծ՝ ոգորում է մշտակոծ,
Մշտականթեղ, մշտախունկ, մշտամատաղ, մշտահույս,
Խնկաբուրվառ աղոթքով բախում երկնի դուռը գոց,
Մերթ ծնրադիր մորս պես, մերթ Վարդանի ցայտքով լույս,
Ամենօրյա Ավարայրն հրդեհելով մեջն հայոց՝
Հանել կուզե ճերմակ մահն՝ հայ ողջ ազգից վանել դուրս...
... Եկեղեցիդ իմ անմեղ,—սակայն բավ է մանկունի,
Աղոթքներիդ ձեռքերով ընկնես ոտքերն Աստծուդ,
Թող նա քնի... Դու զարթնի, ազգ իմ՝ երկու գլխանի,
Խաչագլուխ թուր ցցե գմբեթներիդ, որ ածուդ
Գեթ լճից լիճ ծովանա՝ Վանա ծովդ էլ ծով ծնի,
Որ խաչդ թուր կայծակե՝ թրերի դեմ արնածուփ:
Եկեղեցիդ իմ խաչված, դու իմ վշտին հավատա,
Երբ խաչերդ թուր ծնեն՝ կգա Հիսուսն էլ անբիծ,
Հայոց միակ մայր տաճար քո Մասիսն էլ քեզ կտա,
Կտա, երբ թուր կայծակես քո նեղ օրվա սև ամպից,
Այնժամ պիտի կանթեղվեն արցունքներդ էլ մարգարտյա՝
Աղթամարա կրծքին էլ՝ Վանա ծովով քո անբիծ:
Եկեղեցիդ իմ անմեղ,—ի սե՜ր գերված մայր հողի,
Աստվածամայրն ես դու կույս՝ որ հույսով է միշտ հղի,

Աղբյուրը՝—Հայրենիք (Բոստոն, թերթ), 1973, 6 հունվարի:

Դու՝ հավատով մասիսված այն սանդուխքն ես մեր մարմար,
Որով ոչ թե սատանան, այլ վաղն Աստված կիջնի վար,
Կգա ահեղ դատաստանն ու նա կտա քոնը քեզ:
Արարատիդ գագաթին թրախաչդ կզարկես...

. . . . . .

Վեր գմբեթված հավատով հավերժ պիտի մասիսվես:

ՊԻՏԻ ՀԱՒԱՏԱՍ...

Ո՞վ մարդ, մի բանի պիտի հաւատաս,
Թէկուզ ունայնի, որ ահ ունենաս:

Մի ոգեձայնի պիտի հաւատաս,
Որ քեզ հայր լինի, միշտ մանուկ մնաս:

Մի անսասանի պիտի հաւատաս,
Որ քեզ սասանի՝ չգազանանաս:

Մի բարի բանի պիտի հաւատաս,
Որ չարդ վանի, որ բարի մնաս:

Մի երկնայինի պիտի հաւատաս,
Որ քեզ ահ լինի, որ էլ մահ չտաս:

Մի աստուածայնի պիտի հաւատաս,
Մի խղճի ձայնի, որ գէթ մարդանաս:

Մի յաւիտեանի պիտի հաւատաս՝
Որ մարդ լինի՝ երբ էլ աշխարհ գաս:

Ո՞վ մարդ, մի բանի պիտի հաւատաս՝
Մարդուց վեր բանի, որ աստուածանաս:

Թէկուզ չլինի՝ պիտի հաւատաս,
Որ Աստուած լինի, որ գէթ մարդ մնաս...

Աղբյուրը՝—Հայ կեդրոն (Բուենոս Այրես), 1966, № 7—8, էջ 141: